**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/5127-2026

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում 2026 թվականի փետրվարի 11-ի նիստում առաջին ընթերցմամբ ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-1217-16.12.2025,05.02.2026-ՏՏԳՇ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկները:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

1. Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետով նախատեսվում է օրենքի 22-րդ հոդվածը լրացնել նոր 1.1-ին մասով, որի համաձայն՝ ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումը կարող է հետ վերցնել այն ներկայացվելու օրվանից հետո՝ **եռօրյա ժամկետում**, միևնույն ժամանակ՝ Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսվում է օրենքի 70-րդ հոդվածը լրացնել նոր 6-րդ մասով, որի համաձայն՝ ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումը կարող է հետ վերցնել այն ներկայացվելու օրվանից հետո՝ երեք **աշխատանքային օրվա** ընթացքում: Ուստի, հասկացությունների միատեսակությունն ապահովելու նպատակով՝ առաջարկում ենք ժամկետներին առնչվող կարգավորումները վերանայել:

Այս կապակցությամբ հարկ է նկատի ունենալ Աշխատանքային օրենսգրքի 29-րդ հոդվածի 7-րդ մասը, ըստ որի՝ օրացուցային օրերով հաշվարկվող ժամկետներում ներառվում են նաև հանգստյան օրերը և ոչ աշխատանքային՝ տոնական ու հիշատակի օրերը: Եթե ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը: Օրերով հաշվարկվող ժամկետը հաշվարկվում է օրացուցային օրերով, եթե աշխատանքային

օրենսդրությամբ կամ աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով այլ բան նախատեսված չէ:

2. Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգավորումն առաջարկում ենք նախատեսել գործող օրենքի 70-րդ հոդվածի 1.1-ին մասի տեսքով՝ կարգավորումների տրամաբանական հաջորդականություն ապահովելու նպատակով: Այդ դեպքում հարկ կլինի վերանայել նաև Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին կետով նոր խմբագրությամբ շարադրվող մասի հղումները:

Վերոնշյալ դիտողությունները վերաբերում են նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի համապատասխան կարգավորումներին:

Հարգանքով՝ **ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**